

Խոշոր և միջին բիզնեսի վարկային (երաշխիք, վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) հայտի ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Իրավաբանական փաստաթղթեր:

- 1.1 Գլխավոր տնօրենի՝ Տնօրինության նախագահի անունով ներկայացված վարկային հայտ (Հայտատուի տնօրենի կողմից ստորագրված և հաստատված), Բանկի կողմից սահմանված ձևով):
- 1.2 Կանոնադրության և ՀՎՀՀ պատճենները:
- 1.3 Հայտատուի պետական գրանցման վկայականի պատճենը ներդիրներով:
- 1.4 Հայտատուի ղեկավարի/տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի և սոցիալական քարտերի (առկայության դեպքում) պատճենները: Բաժնետիրական ընկերության դեպքում՝ նաև 10% և ավել բաժնետուն ունեցող բաժնետիրոջ անձնագրի և սոց. Քարտի (առկայության դեպքում) պատճենները: Իրավաբանական անձ բաժնետիրոջ դեպքում՝ 1.2-1.4 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 1.5 Համապատասխան արտոնագրի և/կամ թույլտվության պատճենը (առկայության դեպքում):
- 1.6 Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը: Ֆիզիկական անձ գրավատուի դեպքում՝ սեփականատիրոջ անձնագրի, եթե ամուսնացած է՝ ամուսնու/կնոջ անձնագրի և ամուսնության վկայականի պատճենները:
- 1.7 Երրորդ անձ իրավաբանական անձ գրավատուների դեպքում՝ լրացուցիչ գրավատուի մասով 1.2-1.4 և 1.11 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 1.8 Երրորդ անձ ֆիզիկական անձ երաշխավորի դեպքում՝ լրացուցիչ երաշխավորների և նրա ամուսնու անձնագրերի պատճենները և նրանց մասով 1.11 կետով սահմանված փաստաթղթերը:
- 1.9 Երրորդ անձ իրավաբանական անձ երաշխավորի դեպքում՝ լրացուցիչ երաշխավորի մասով 1.2-1.4 և 2.2-2.5 կետերով սահմանված փաստաթղթերը:
- 1.10 Խոշոր բիզնեսի ներկայացուցիչ հայտատուի դեպքում՝ գրավի նախնական գնահատման վերաբերյալ տեղեկանք (անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ գույքահարկի և չվճարված կադաստրային արժեքի մասով պատրավորությունների նշումով) տրված Բանկի կողմից հավատարագրված գնահատող ընկերության կողմից:
- 1.11 Կազմակերպության տնօրենի/ղեկավարի և գլխավոր հաշվապահի (բաժնետիրական ընկերության դեպքում՝ նաև 10% և ավել բաժնեմաս ունեցող բաժնետերերի) Բանկի կողմից ՀՀ ԿԲ վարկային ռեզիստից և/կամ <ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ> -ից հայտատուի ֆինանսական պատարվությունների և այլ տեղեկատվության վերաբերյալ հարցում կատարելու գրավոր համաձայնությունը:
- 1.12 Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

2. Ֆինանսական փաստաթղթեր:

- 2.1 Վարկային գործարքի շրջանակներում վարակվորման նպատակը հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համաձայնագրեր, վճարման հանձնարարականներ և պահանջագրեր, հաշիվ-ապրանքագրեր, ակտեր և այլն):
- 2.2 ԱԱՀ վերաբերյալ հաշվետվություն անցյալ ֆինանսական տարվա համար, ինչպես նաև ընթացիկ տարվա բոլոր ամիսների համար, շահութահարկի վերաբերյալ հաշվետվություն վերջին հաշվետու ժամկետի դրությամբ (անհրաժեշտության դեպքում բացված ձևով) հարկային մարմիններին ներկայացված, ղեկավարի/տնօրենի ստորագրությամբ և կազմակերպության կնիքով կնքված:
- 2.3 Կառավարչական հաշվետվություններ բանկի կողմից սահմանված ձևով
- 2.4 Այլ բանկերից ստացված գործող ֆինանսավորման/վարկերի վերաբերյալ տեղեկատվություն (գործող վարկային, գրավի, երաշխավորության պայմանագրերի պատճենները, մարումների գրաֆիկ և գրավադրված գույքի ցանկ):
- 2.5 Այլ բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ հաշվի քաղվածքներ բոլոր հաշիվների վերջին 12 ամիսների շրջանառության և մնացորդների վերաբերյալ:
- 2.6 Պետական եկամուտների կոմիտեից տեղեկանք պետական բյուջեում ունեցած պարտավորությունների վերաբերյալ:
- 2.7 Դեբիտորների և Կրեդիտորների ցանկը բանկի կողմից սահմանված ձևով
- 2.8 Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

3. Կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպությունների համար՝

- 3.1 Լրացուցիչ փոխկապակցված անձ հանդիսացող կազմակերպության համար 1.2-1.5 և 1.11 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:
- 3.2 Հայտատուի բիզնեսի հետ փոխկապակցված կազմակերպությունների առկայության դեպքում՝ փոխկապակցված անձանց մասով 2.2-2.5 և 2.7 կետերով սահմանված բոլոր փաստաթղթերը:

4. Խոշոր և միջին բիզնեսի Վարկային (երաշխիք, վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) գործարքների ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- 4.1. Տեղեկանք Պետական ռեգիստրից կանոնադրության վերջին փոփոխություններ, հիմնադիրների և տնօրենի վերաբերյալ:
- 4.2. Տեղեկանք ռեեստրից բաժնետերերի կազմի վերաբերյալ:
- 4.3. Բոլոր կորպորատիվ փաստաթղթերի և թույլտվությունների (անհրաժեշտության դեպքում) բնօրինակները, որոնք անհրաժեշտ են վարկային գործարքի ձևակերպման համար համաձայն կազմակերպության կանոնադրության և ՀՀ օրենսդրության:²:
- 4.4. Առաջարկվող գրավի սեփականության վկայականի բնօրինակ:
- 4.5. Անշարժ գույքի դեպքում՝ միասնական տեղեկանք Պետական կադաստրից: Բաժնետոմսերի գրավի դեպքում՝ տեղեկանք պետական ռեգիստրից/դեպոզիտարիից սահմանափակումների վերաբերյալ:
- 4.6. Խոշոր բիզնեսի սուբյեկտներ համար՝ բանկի կողմից հավատարագրված գնահատողի կողմից տրամադրված գույքի վերջնական գնահատման ակտ: Միջին բիզնեսի սուբյեկտների համար՝ Բանկի գրավադրվող գույքի հետ աշխատող ստորաբաժանման կողմից տրված գույքի գնահատման վերջնական եզրակացություն: Անշարժ գույքի գնահատման ակտը/եզրակացությունը պետք է ներառի գույքահարկի և չվճարված կադաստրային արժեքի մասով պարտավորությունների վերաբերյալ նշում:
- 4.7. Երրորդ անձ իրավաբանական անձ գրավատուների համար՝ լրացուցիչ 4.1-4.3 կետերով սահմանված փաստաթղթերը գրավատուի մասով:
- 4.8. Երրորդ անձ իրավաբանական անձ գրավատուների/երաշխավորների համար՝ լրացուցիչ բոլոր կորպորատիվ փաստաթղթերի և թույլտվությունների (անհրաժեշտության դեպքում) բնօրինակները, որոնք անհրաժեշտ են վարկային գործարքի ձևակերպման համար համաձայն կազմակերպության կանոնադրության և ՀՀ օրենսդրության:²:
- 4.9. Բանկի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

¹ Այն դեպքում, երբ Բանկում առկա են վարկային հայտի ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկատվություն, նյութեր), ապա դրանք հաճախորդից նորից չեն պահանջվում:

Հաճախորդի կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հաստատված կազմակերպության ղեկավարի/տնօրենի ստորագրությամբ, կազմակերպության կնիքով և իսկականի հետ ճիշտ է՝ նշումով:

² ՀՀ օրենսդրության և կազմակերպության Կանոնադրության պահանջներից ելնելով կարող է անհրաժեշտ լինել կազմակերպության բաժնետերերի ժողովի կամ խորհրդի որոշում, որը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

- Ժողովի/խորհրդի արձանագրության համար;
- Ժողովի/խորհրդի անցկացման ամսաթիվը;
- Ժողովի/խորհրդի մասնակիցների քանակը և հղում գորող կանոնադրության քվորումի ապահովման վերաբերյալ կետին, այդ թվում խոշոր գործարքների համար;
- Ժողովի/խորհրդի օրակարգը, որը պետք է պարունակի ՎՏԲ (Հայաստան) ՓԲԸ-ից վարկ ստանալու, գրավադրվող գույքի, այլ ապահովության, գրավատուների և երաշխավորների հարցերը (նշելով վարկի գումարը, նպատակը, տոկոսադրույթը և այլ արժեքային պայմանները, մարմանը ժամկետը և կարգը, տուգանքները, գրավի առարկան և գնահատվա արժեքը, համաձայնություն վարկային պայմանագրի խախտման, դեպքում գրավի առարկային արտադատարանային իրացման վերաբերյալ, այդ թվում՝ համաձայնություն գրավի սեփականության իրավունքը գրավի պայմանագրով բանկին անցնելու վերաբերյալ, ինչպես նաև այլ ապահովության (երաշխիքներ, պարտավորություններ և այլ) բազային պայմանների նշում և նկարագրությունը;
- Ժողովի/խորհրդի որոշումը, նշում է պարունակի ՎՏԲ (Հայաստան) ՓԲԸ-ից վարկ ստանալու, գրավադրվող գույքի, այլ ապահովության, գրավատուների և երաշխավորների հարցերը (նշելով վարկի գումարը, նպատակը, տոկոսադրույթը և այլ արժեքային պայմանները, մարմանը ժամկետը և կարգը, տուգանքները, գրավի առարկան և գնահատվա արժեքը, համաձայնություն վարկային պայմանագրի խախտման, դեպքում գրավի առարկային արտադատարանային իրացման վերաբերյալ, այդ թվում՝ համաձայնություն գրավի սեփականության իրավունքը գրավի պայմանագրով բանկին անցնելու վերաբերյալ, ինչպես նաև այլ ապահովության (երաշխիքներ, պարտավորություններ և այլ) բազային պայմանների նշում և նկարագրությունը;
- Ժողովի/խորհրդի որոշում, որով գործող իրավասու անձին (տնօրենին/ղեկավարին) թույլատրվում է/հանձնարվում է կնքել թվարկված բազային պայմաններով գործարքներ (ստորագրել պայմանագրեր):